

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
(1-ին մաս)

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 1. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1. Համայնքային ծառայությունը հանրային ծառայության ինքնուրույն տեսակ է:
2. Տեղական ինքնակառավարման մարմինները քաղաքականությունն իրականացնում են համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու եւ հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց միջոցով՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով նրանց վերապահված լիազորությունների շրջանակներում, քաղաքական որոշումների ընդունմամբ եւ դրանց կատարման համակարգմամբ:
3. Սույն օրենքի իմաստով քաղաքացիական աշխատանքը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված առանձին խնդիրների եւ գործառույթների իրականացումն է վարձու աշխատողների միջոցով:
4. Տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով:
(1-ին հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

ՀՈԴՎԱԾ 2. ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Սույն օրենքով ամրագրվում են Հայաստանի Հանրապետությունում համայնքային ծառայության հիմնական սկզբունքները, կարգավորվում են համայնքային ծառայության պաշտոնների եւ դասային աստիճանների դասակարգման, համայնքային ծառայության պաշտոնի նշանակման, համայնքային ծառայողների ատեստավորման եւ վերապատրաստման, համայնքային ծառայության կադրերի ռեզերվի, համայնքային ծառայողների իրավական վիճակի, համայնքային ծառայության կազմակերպման եւ ղեկավարման, ինչպես նաեւ դրանց հետ կապված այլ հարաբերություններ:

ՀՈԴՎԱԾ 3. ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.
 - ա) համայնքային ծառայություն՝ քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ արդյունքներից անկախ մասնագիտական գործունեություն, որը կատարվում է համայնքների ղեկավարների մարմինների աշխատակազմում, (Երեւանում՝ Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմում) (այսուհետ՝ համայնքի ղեկավարի աշխատակազմ)՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով այդ մարմիններին վերապահված խնդիրների եւ գործառույթների իրականացման նպատակով.

բ) համայնքային ծառայության պաշտոն՝ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն.

գ) համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկ՝ սույն օրենքով սահմանված կարգով հաստատված համայնքային ծառայության բոլոր պաշտոնների ցանկ.

դ) համայնքային ծառայող՝ համայնքի ղեկավարի աշխատակազմում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված որեւէ պաշտոն (բացառությամբ ժամանակավոր թափուր պաշտոնի) զբաղեցնող անձ.

ե) համայնքային ծառայության պաշտոնի անձնագիր՝ տվյալ պաշտոնն զբաղեցնող համայնքային ծառայողի համար սույն օրենքով եւ իրավական այլ ակտերով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները նկարագրող, կառավարչական հմտություններին ունեցած մասնակցության աստիճանը որոշող եւ տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար համայնքային ծառայողին մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող, ինչպես նաեւ համայնքային ծառայության դասային համապատասխան աստիճան ունենալու պահանջները սահմանող՝ սույն օրենքով սահմանված կարգով հաստատված փաստաթուղթ.

զ) համայնքային ծառայության դասային աստիճան՝ համայնքային ծառայողի մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին համապատասխանող որակավորման չափանիշ.

է) համայնքային ծառայողների ատեստավորում՝ զբաղեցրած պաշտոնին համայնքային ծառայողների մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների համապատասխանության որոշում.

ը) համայնքային ծառայողների վերապատրաստում՝ համայնքային ծառայողների մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների հետեւողական կատարելագործում.

թ) համայնքային ծառայության կադրերի ռեզերվ՝ համայնքային ծառայության պաշտոններ չզբաղեցնող՝ սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասում նշված անձանց հանրույթ.

ժ) ծառայողական քննություն՝ սույն օրենքով եւ իրավական այլ ակտերով սահմանված դեպքերում եւ կարգով համայնքային ծառայողի պարտականությունների կատարմանն ու նրա գործունեությանն առնչվող հարցերի քննություն.

ժա) տեխնիկական սպասարկում իրականացնող անձ՝ քաղաքական, հայեցողական, ինչպես նաեւ համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց լիազորությունների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական սպասարկում իրականացնող:

(3-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն, 19.05.09 ՀՕ-120-Ն օրենքներ)

ՀՈՂՎԱԾ 4. ՄՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է համայնքների ղեկավարների աշխատակազմերում (այդ թվում՝ առանձնացված ստորաբաժանումներում) համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոններ զբաղեցնող բոլոր անձանց վրա:

2. Քաղաքական, հայեցողական պաշտոններ զբաղեցնող, ինչպես նաեւ տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք համայնքային ծառայողներ չեն համարվում:

(4-րդ հոդվածը փոփ. 22.12.06 ՀՕ-19-Ն, 30.09.08 ՀՕ-172-Ն օրենքներ)

ՀՈՂՎԱԾ 5. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքային ծառայության հիմնական սկզբունքներն են՝

ա) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների գերակայությունը, մարդու եւ քաղաքացու իրավունքների ու ազատությունների առաջնահերթությունը.

- բ) համայնքային ծառայության կայունությունը .
 - գ) համայնքային ծառայողներին ներկայացվող հիմնական պահանջների միասնականությունը եւ օրենքի առջեւ համայնքային ծառայողների իրավահավասարությունը .
 - դ) համայնքային ծառայության հրապարակայնությունը .
 - ե) համայնքային ծառայողների քաղաքական զսպվածությունը .
 - զ) քաղաքացիների համար համայնքային ծառայության հավասար մատչելիությունը` իրենց մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին համապատասխան .
 - է) համայնքային ծառայողների պրոֆեսիոնալիզմը .
 - ը) համայնքային ծառայողների իրավական եւ սոցիալական պաշտպանվածությունը .
 - թ) համայնքային ծառայողների պատասխանատվությունն իրենց ծառայողական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար .
 - ժ) համայնքային ծառայողների գործունեության վերահսկելիությունը եւ հաշվետու լինելը:
- (5-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

ՀՈԴՎԱԾ 6. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՄԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Համայնքային ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն օրենքով, "Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչպես նաև նորմատիվ իրավական այլ ակտերով:
2. Համայնքային ծառայողների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ, էթե համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ այդ հարաբերությունները կարգավորող առանձնահատկություններ չեն սահմանված:
3. Համայնքային ծառայողների միջև ծառայողական փոխհարաբերությունները կարգավորվում են նաև աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգով, որը հաստատում են համապատասխան համայնքների ղեկավարները` Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հաստատած օրինակելի կանոնակարգի հիման վրա:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 7. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

1. Համայնքային ծառայության պաշտոնները դասակարգվում են խմբերի` ելնելով այդ պաշտոնն զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման եւ ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների եւ ներկայացուցչության, խնդիրների բարդության եւ դրանց ստեղծագործական լուծման պահանջի, ինչպես նաև գիտելիքների եւ հմտությունների անհրաժեշտ մակարդակից:
2. Համայնքային ծառայության պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.
 - ա) համայնքային ծառայության գլխավոր պաշտոններ .
 - բ) համայնքային ծառայության առաջատար պաշտոններ .
 - գ) համայնքային ծառայության կրտսեր պաշտոններ:

3. Համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խումբ, դասակարգվում է 1-ին, 2-րդ եւ 3-րդ ենթախմբերի: Համայնքային ծառայության պաշտոնների խմբերում 1-ին ենթախումբը տվյալ խմբի բարձրագույն ենթախումբն է: Համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների 1-ին ենթախմբում ընդգրկվում է 15 հազարից ավելի բնակչություն ունեցող համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի պաշտոնը:

4. Համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր ենթախմբի ընդհանուր նկարագիրը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

(7-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն, 19.05.09 ՀՕ-120-Ն օրենքներ)

ՀՈԴՎԱԾ 8. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՄԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

1. Համայնքային ծառայողներին շնորհվում են հետևյալ դասային աստիճանները.

ա) համայնքային ծառայության գլխավոր պաշտոններ`

- 1-ին ենթախմբի պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողներին` Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան,

- 2-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողներին` Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան, ինչպես նաև առավելագույն` Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան,

- 3-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողներին` Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճան, ինչպես նաև առավելագույն` Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան.

բ) համայնքային ծառայության առաջատար պաշտոններ`

- 1-ին ենթախմբի պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողներին` Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, ինչպես նաև առավելագույն` Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճան,

- 2-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողներին` Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, ինչպես նաև առավելագույն` Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան,

- 3-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողներին` Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, ինչպես նաև առավելագույն` Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան.

գ) համայնքային ծառայության կրտսեր պաշտոններ`

- 1-ին ենթախմբի պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողներին` Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան, ինչպես նաև առավելագույն` Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան,

- 2-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողներին` Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան, ինչպես նաև առավելագույն` Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան,

- 3-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 3-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան, ինչպես նաև առավելագույն՝ Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:

2. Համայնքային ծառայության 1-ին, 2-րդ եւ 3-րդ դասի խորհրդականի, ինչպես նաև համայնքային ծառայության 1-ին դասի առաջատար ծառայողի դասային աստիճանները շնորհում է համապատասխան համայնքի ղեկավարը, իսկ մնացած դասային աստիճանները՝ համապատասխան համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը:

2.1. Երեւանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության գլխավոր խմբի, ինչպես նաև առաջատար խմբի առաջին ենթախմբ պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողներին համայնքային ծառայության դասային աստիճանները շնորհում է վարչական շրջանի ղեկավարը:

3. Համայնքային ծառայության պաշտոնի նշանակման հետ միաժամանակ ծառայողին շնորհվում է համայնքային ծառայության համապատասխան դասային աստիճան, եթե նա չունի քաղաքացիական ծառայության կամ համայնքային ծառայության ավելի բարձր դասային աստիճան:

Համայնքային ծառայողին իր զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված

համայնքային ծառայության առավելագույն դասային աստիճանը շնորհվում է՝

- գլխավոր պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողին՝ համապատասխան դասային աստիճանն ստանալուց ոչ շուտ, քան չորս տարի, եւ ոչ ուշ, քան վեց տարի հետո,

- առաջատար պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողին՝ համապատասխան դասային աստիճանն ստանալուց ոչ շուտ, քան երեք տարի, եւ ոչ ուշ, քան հինգ տարի հետո,

- կրտսեր պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողին՝ համապատասխան դասային աստիճանն ստանալուց ոչ շուտ, քան երկու տարի, եւ ոչ ուշ, քան չորս տարի հետո:

Առաջին անգամ (բացառությամբ սույն օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված

դեպքերի) համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող անձին համայնքային ծառայության համապատասխան դասային աստիճան շնորհվում է սույն օրենքով նախատեսված փորձաշրջանի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում:

4. Համայնքային ծառայության 1-ին, 2-րդ եւ 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճանները համապատասխանում են համապատասխանաբար քաղաքացիական ծառայության 1-ին, 2-րդ եւ 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճաններին, համայնքային ծառայության 1-ին, 2-րդ եւ 3-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճանները՝ համապատասխանաբար քաղաքացիական ծառայության 1-ին, 2-րդ եւ 3-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճանները՝ համապատասխանաբար քաղաքացիական ծառայության 1-ին, 2-րդ եւ 3-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճաններին:

5. Քաղաքացիական ծառայության դասային աստիճան ունեցող անձին համայնքային ծառայության պաշտոնի առաջին անգամ նշանակման հետ միաժամանակ շնորհվում է նրա քաղաքացիական ծառայության դասային աստիճանին համապատասխան համայնքային ծառայության դասային աստիճան, եթե նրա ունեցած քաղաքացիական ծառայության դասային աստիճանը ցածր չէ տվյալ պաշտոնի համար նախատեսված համայնքային ծառայության դասային աստիճանից, իսկ քաղաքացիական ծառայության 1-ին կամ 2-րդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան ունեցողներին՝ համայնքային ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:

6. Սույն հոդվածի 1-ին մասում նշված համայնքային ծառայության

առավելագույն դասային աստիճանները կարող են իջեցվել մեկ աստիճանով՝ միայն որպես սույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի "գ.1" կետով նախատեսված կարգապահական տույժի կիրառում:

7. Համայնքային ծառայողը դասային աստիճանից զրկվում է զբաղեցրած պաշտոնից սույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի "բ", "գ", "ժ", "ժա", "ժբ" եւ "ժէ" կետերով նախատեսված հիմքերով ազատվելու դեպքերում:

(8-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն, 19.05.09 ՀՕ-120-Ն օրենքներ)

ՀՈԴՎԱԾ 9. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ

1. Յուրաքանչյուր համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը եւ համայնքային ծառայության յուրաքանչյուր խմբում եւ ենթախմբում ընդգրկվող պաշտոնների անվանացանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

2. Համայնքների ղեկավարների աշխատակազմերի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը ենթակա են հաստատման սույն հոդվածի 1-ին մասում նշված համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

3. Համայնքների ղեկավարների աշխատակազմերի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերում սահմանված կարգով փոփոխություններ կատարելու հետեւանքով առաջացած նոր պաշտոնների անձնագրերը ենթակա են հաստատման համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը փոփոխելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

(9-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

ՀՈԴՎԱԾ 10. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ

1. Համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը սույն օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագրի հիման վրա հաստատում է համապատասխան համայնքի ղեկավարը:

Համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերն ընդգրկում են նաեւ աշխատանքային ստաժի եւ փորձի առնվազն հետեւյալ չափանիշները.

ա) համայնքային ծառայության գլխավոր պաշտոններ՝ բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ քաղաքացիական ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ եւ համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա քաղաքացիական ծառայության ստաժ եւ քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին հինգ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան եւ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

բ) համայնքային ծառայության առաջատար պաշտոններ՝ բարձրագույն կրթություն, համայնքային կամ քաղաքացիական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին հինգ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

գ) համայնքային ծառայության կրտսեր պաշտոններ՝ միջնակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի եւ փորձի:

2. Մինչեւ 2015 թվականի հունվարի 1-ը համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի անձնագիրն ընդգրկում է համայնքային ծառայության, պետական կառավարման

ուրրտի կամ համայնքային ենթակայության հիմնարկների ղեկավար պաշտոններում առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, առաջատար պաշտոնների անձնագրերը՝ համայնքային ծառայության, պետական կառավարման ուրրտի կամ համայնքային ենթակայության հիմնարկների ղեկավար պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:

Մինչև 2015 թվականի հունվարի 1-ը 1000-ից պակաս բնակչություն ունեցող համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի պաշտոնի անձնագիրը Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի համաձայնությամբ կարող է չընդգրկել սույն հոդվածի 1-ին մասի "ա" կետով ներկայացվող չափանիշները:

3. Համայնքային ծառայության պաշտոնի անձնագիրը կարող է փոփոխվել, եթե դա տվյալ պաշտոնն զբաղեցնող համայնքային ծառայողի համար չի առաջացնում այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստումից հետո:

(10-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն, 19.05.09 ՀՕ-120-Ն օրենքներ)

ԳԼՈՒԽ 3

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼԸ

ՀՈՂՎԱԾ 11. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Սույն օրենքով սահմանված կարգով համայնքային ծառայության պաշտոն

զբաղեցնելու իրավունք ունեն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները եւ Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցողները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

(11-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

ՀՈՂՎԱԾ 12. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԸ

Համայնքային ծառայության պաշտոնն զբաղեցնելու իրավունք չունի այն անձը, որը՝

ա) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

բ) դատական կարգով զրկվել է համայնքային եւ (կամ) քաղաքացիական ծառայության պաշտոնն զբաղեցնելու իրավունքից.

գ) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը համայնքային ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը եւ լիազորությունների իրականացմանը: Այդ հիվանդությունների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

դ) դատապարտվել է հանցագործության համար, եւ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

ե) խուսափել է ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից:

(12-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

ՀՈՂՎԱԾ 13. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

1. Համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը եւ ատեստավորումն անցկացնում են սույն հոդվածի երկրորդ մասով սահմանված կարգով կազմավորվող մրցութային եւ ատեստավորման հանձնաժողովները:

2. Համայնքային ծառայության մրցութային եւ ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվում են համապատասխան համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու մինչեւ հինգ անդամներ եւ մարզպետարանի երեք ներկայացուցիչ: Համայնքային ծառայության մրցութային եւ ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական եւ անհատական կազմերը որոշում է համայնքի ավագանին: Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովը կարող է իր որոշմամբ հանձնաժողովի կազմում լրացուցիչ ընդգրկել համապատասխան մասնագետի:

2.1. Երեւանի քաղաքապետարանի մրցութային եւ ատեստավորման հանձնաժողովների կազմերն ընտրվում են այդ նպատակով համակարգչում գետեղված եւ պատահական ընտրված թեկնածուներից՝ յուրաքանչյուր մրցույթ կամ ատեստավորում անցկացնելուց ոչ շուտ, քան քսանչորս ժամ առաջ՝ հետեւյալ հարաբերակցությամբ.

ա) մեկ երրորդը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ներկայացուցիչներ.

բ) մեկ երրորդը՝ Երեւանի քաղաքապետարանի ներկայացուցիչներ.

գ) մեկ երրորդը՝ գիտական եւ ուսումնական հաստատությունների համապատասխան մասնագիտություն ունեցող ներկայացուցիչներ:

3. Համայնքային ծառայության մրցութային եւ ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատում են համապատասխան համայնքների ղեկավարները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հաստատած մրցութային եւ ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգի հիման վրա:

(13-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն, 19.05.09 ՀՕ-120-Ն օրենքներ)

ՀՈԴՎԱԾ 14. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԸ

1. Համայնքային ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում այդ պաշտոնն զբաղեցվում է մրցույթով, բացառությամբ սույն օրենքի 14.1-րդ, 18-րդ հոդվածներով եւ 29-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար համապատասխան համայնքի ղեկավարը մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ առնվազն հազար տպաքանակ ունեցող մամուլի եւ զանգվածային տեղեկատվության այլ միջոցներով:

3. Համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնում է համայնքի ղեկավարի աշխատակազմը:

4. Մրցութային հանձնաժողովը անձին չի թույլատրում մասնակցել մրցույթին, եթե անձը չի բավարարում սույն օրենքի 11-րդ հոդվածով եւ 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, կամ առկա է սույն օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որեւէ մեկը:

5. Մրցույթն անցկացվում է նաեւ, եթե մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ մասնակից:

6. Համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի:

7. Թեստավորումը կարող է անցկացվել համակարգչի միջոցով կամ գրավոր:

Թեստերը կազմվում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հաստատած կարգով՝ վաղօրոք կազմված հարցաշարից եւ դրանից պատահական ընտրված հարցերից՝ մասնակիցների գիտելիքները հետեւյալ բնագավառներում ստուգելու համար.

ա) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության.

բ) համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության.

գ) տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը սահմանող

Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

Թեստավորման առաջադրանքները բաղկացած են հարցերից եւ խնդիրներից:

Յուրաքանչյուր հարց (խնդիր) պետք է ունենա երեք կամ չորս ենթադրյալ պատասխան , որոնցից միայն մեկն է միանշանակ ճիշտ պատասխանը:

Գաղտնիությունն ապահովելու նպատակով թեստավորման փուլն անցկացվում է մասնակիցների համար կողերի կիրառմամբ:

8. Համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթի երկրորդ` հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք ունեն թեստավորման առաջադրանքների առնվազն 75 տոկոսին ճիշտ պատասխանած մասնակիցները:

Հարցազրույցն անցկացվում է համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրի դրույթների շրջանակներում նրանց գործնական կարողություններն ստուգելու նպատակով:

Մրցութային հանձնաժողովը հարցազրույցի միջոցով յուրաքանչյուր մասնակցի գործնական կարողությունները գնահատում է 5 բալային համակարգով: Նվազագույն դրական գնահատականը 3 բալն է:

Մրցույթի հաղթող է ճանաչվում մրցութային հանձնաժողովի` գնահատմանը

մասնակցած անդամների կեսից ավելիի կողմից դրական բալերով գնահատված այն մասնակիցը, որի ստացած դրական բալերի հանրագումարն առավելագույնն է:

Եթե երկու կամ ավելի մասնակիցներ հավաքել են դրական բալերի առավելագույն հավասար հանրագումար, ապա նրանցից հաղթող է (են) ճանաչվում թեստային փուլում առավել բարձր միավորներ հավաքած մասնակիցը (առավել բարձր հավասար միավորներ հավաքած մասնակիցները):

9. Մրցույթի արդյունքները հրապարակվում են մրցույթն անցկացնելու օրը:

9.1. Մրցույթի արդյունքները հրապարակվելուց հետո այդ արդյունքները կարող են մասնակցի (իր արդյունքների մասով) կամ մրցութային հանձնաժողովի անդամի կողմից գրավոր բողոքարկվել:

Սույն մասի առաջին պարբերությամբ նախատեսված գրավոր բողոքը քննության է առնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը` ուսումնասիրելով մասնակցի տված պատասխանները, դրանց վերաբերյալ

մրցութային հանձնաժողովի գնահատականները (դրանց ճիշտ կամ սխալ լինելը), դրանք համադրելով քվեարկության արդյունքների հետ եւ որոշելով կոնկրետ մասնակցի` մրցույթում հաղթող ճանաչվելու հարցը:

Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման

մարմինը սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված որոշումն ուղարկում է պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին դա ընդունելուց հետո` նույն օրը:

Սույն մասի առաջին եւ երկրորդ պարբերություններով նախատեսված գրավոր բողոք ներկայացնելու, դա քննության առնելու եւ որոշում ընդունելու կարգն ու ժամկետները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

10. Մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո սույն հոդվածի 9.1-րդ մասով նախատեսված գրավոր բողոքի բացակայության դեպքում համապատասխան մրցութային հանձնաժողովից ստացված` մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցների) վերաբերյալ եզրակացությունը մրցույթի նախապատրաստական աշխատանքներ իրականացնող աշխատակազմն ուղարկում է տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին: Եզրակացությունը ստանալուց հետո` աշխատանքային երեք օրվա ընթացքում, համայնքային ծառայության տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին (մասնակիցներից մեկին) նշանակում է համապատասխան պաշտոնում:

10.1. Սույն հոդվածի 9.1-րդ մասով նախատեսված գրավոր բողոքի առկայության դեպքում սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված եզրակացության հետ միաժամանակ տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին է ուղարկվում նաեւ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինի` սույն հոդվածի 9.1-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված որոշումը:

11. Եթե մրցույթի մասնակիցներից ոչ մեկը թեստավորման առաջադրանքների առնվազն 75 տոկոսին ճիշտ պատասխան չի տվել, կամ հարցազրույցի մասնակիցներից ոչ մեկը չի ստացել մրցութային հանձնաժողովի՝ գնահատմանը մասնակցած անդամների կեսից ավելիի դրական գնահատական ու մրցույթում հաղթող չի ճանաչվել, կամ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը սույն հոդվածի 9.1-րդ մասով նախատեսված դեպքում կայացրել է մրցույթում հաղթող չճանաչվելու մասին որոշում, ապա մրցույթը համարվում է կայացած՝ առանց հաղթող ճանաչելու, եւ անցկացվում է նոր մրցույթ: Եթե մրցութային հանձնաժողովն իրավագոր չէ (նիստին չի մասնակցում հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելին), ապա մրցույթը համարվում է չկայացած, եւ անցկացվում է կրկնակի մրցույթ: Կրկնակի մրցույթի ժամանակ մրցույթին մասնակցելու համար նոր դիմումներ չեն ընդունվում, եւ այն անցկացվում է 10-օրյա ժամկետում՝ ընդհանուր հիմունքներով:

Եթե մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ

ներկայացված բոլոր դիմումներում առկա է սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված հիմքերից որեւէ մեկը, ինչպես նաեւ եթե մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած անձանցից ոչ մեկը չի ներկայացել, ապա մրցույթը համարվում է չկայացած, եւ անցկացվում է նոր մրցույթ:

Սույն հոդվածով սահմանված կարգի խախտմամբ անցկացված մրցույթն անվավեր է ճանաչվում դատական կարգով:

Նոր մրցույթ է անցկացվում նաեւ մրցույթն անվավեր ճանաչվելու դեպքում:

Նոր մրցույթն անցկացվում է ընդհանուր հիմունքներով:

Եթե նոր կամ կրկնակի մրցույթը համարվում է չկայացած (անվավեր), ինչպես նաեւ նոր կամ կրկնակի մրցույթում հաղթող չի ճանաչվում, ապա համայնքային ծառայության տվյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարվում է նոր մրցույթ:

12. Սույն օրենքի հիման վրա մրցույթ անցկացնելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

(14-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

ՀՈԴՎԱԾ 14.1. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԱՐՏԱՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՋԲԱՂԵՑՆԵԼԸ

1. Պետական մարմիններին վերապահված լիազորությունը համայնքին պատվիրակելու հետեւանքով համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում ընդգրկված նոր պաշտոնները Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նախատեսված լինելու դեպքում արտամրցութային կարգով ենթակա են համալրման գրավոր համաձայնություն տված այն աշխատողներով, որոնց միջոցով իրականացվել է նշված լիազորությունը՝

մինչեւ նշված պաշտոնները համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում ընդգրկելը՝ հաշվի առնելով սույն օրենքի 11-րդ, 12-րդ հոդվածների, 24-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

2. Սույն հոդվածով նախատեսված համայնքային ծառայության նոր պաշտոնները ենթակա են համալրման համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություն եւ (կամ) լրացում կատարելուց հետո՝ 1-ամսյա ժամկետում:

(14.1-րդ հոդվածը լրաց. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

ՀՈԴՎԱԾ 15. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

1. Համայնքային ծառայության գլխավոր խմբի եւ առաջատար խմբի առաջին ենթախմբի պաշտոններում նշանակում եւ այդ պաշտոններից ազատում է համայնքի ղեկավարը, իսկ առաջատար խմբի երկրորդ եւ երրորդ ենթախմբերի, ինչպես նաեւ կրտսեր խմբի պաշտոններում՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը՝ մրցույթում հաղթող ճանաչված անձանցից:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային մարմինների ղեկավարներին պաշտոնում նշանակում եւ ազատում է համայնքի ղեկավարը: Երեւան քաղաքում քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային մարմինների ղեկավարներին պաշտոնում նշանակում եւ ազատում է Երեւանի քաղաքապետը:

1.1. Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի (բացառությամբ վարչական մշրջանների ղեկավարների աշխատակազմերի) համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների խմբի, ինչպես նաեւ առաջատար պաշտոնների խմբի առաջին ենթախմբի պաշտոններում նշանակում եւ այդ պաշտոններից ազատում է Երեւանի քաղաքապետը՝ մրցույթում հաղթող ճանաչված անձանցից: Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի առաջատար պաշտոնների խմբի երկրորդ եւ երրորդ ենթախմբերի, ինչպես նաեւ կրտսեր պաշտոնների խմբի պաշտոններում նշանակում եւ այդ պաշտոններից ազատում է Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը՝ մրցույթում հաղթող ճանաչված անձանցից:

1.2. Երեւանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի գլխավոր պաշտոնների խմբի, ինչպես նաեւ առաջատար պաշտոնների խմբի առաջին ենթախմբի պաշտոններում նշանակում եւ այդ պաշտոններից ազատում է Երեւանի վարչական շրջանի ղեկավարը՝ մրցույթում հաղթող ճանաչված անձանցից:

2. Առաջին անգամ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող անձի նշանակման դեպքում սահմանվում է մինչեւ վեց ամիս փորձաշրջան՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով: Փորձաշրջանը չանցնելու հիմքով զբաղեցրած պաշտոնից ազատված անձին հաջորդ անգամ համայնքային ծառայության պաշտոնի նշանակման դեպքում սահմանվում է սույն հոդվածով նախատեսված ժամկետով փորձաշրջան:

(15-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն, 26.12.08 ՀՕ-27-Ն, 19.05.09 ՀՕ-120-Ն օրենքներ)

ՀՈԴՎԱԾ 16. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿՎԵԼԻՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԵՐԴՈՒՄԸ

1. Առաջին անգամ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող անձն իր պաշտոնն ստանձնում է հանդիսավոր պայմաններում համայնքի ղեկավարի եւ համայնքի ավագանու անդամների ներկայությամբ տրված երդմամբ. "Ստանձնելով Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայողի պաշտոնը՝ հանդիսավոր երդվում եմ՝ անշեղորեն պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը եւ օրենքները, մարդու եւ քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, աջակցել սահմանադրական կարգի պահպանմանը, արժանապատվորեն կրել համայնքային ծառայողի բարձր կոչումը, անվերապահորեն կատարել ծառայողական պարտականություններս":

2. Երդումը տրվում է անհատական կարգով՝ երդման տեքստն ընթերցելու միջոցով:

3. Համայնքային ծառայողն ստորագրում է երդման՝ իր ընթերցած տեքստը: Երդման մասին գրառում է կատարվում նրա անձնական գործում:

ՀՈԴՎԱԾ 17. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՏԱԺԸ

1. Համայնքային ծառայության ստաժը ներառում է համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու, համայնքների ղեկավարների աշխատակազմերում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը, ինչպես նաև մինչև համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելն աշխատած ողջ ժամանակաշրջանը:

Համայնքային ծառայության ստաժը չի ներառում սույն օրենքով սահմանված կարգի խախտմամբ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու, օրենքի խախտմամբ համայնքների ղեկավարների աշխատակազմերում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը, ինչպես նաև մինչև համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելն աշխատած ողջ ժամանակաշրջանը:

2. Համայնքային ծառայության ստաժը հաշվարկվում է համայնքային ծառայողի ընդհանուր եւ մասնագիտական աշխատանքային ստաժում:

3. Սույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի "ը" կետով նախատեսված հիմքով՝ համայնքային ծառայության պաշտոնից ազատված անձի քաղաքական կամ հայեցողական, կամ քաղաքացիական պաշտոն զբաղեցնելու, ինչպես նաև ժամկետային աշխատանքային պայմանագրով համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու ժամանակաշրջանի աշխատանքային ստաժը հավասարեցվում է համայնքային ծառայության ստաժին:

(17-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

ՀՈԴՎԱԾ 18. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼԸ

1. Համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու՝ հղիության եւ ծննդաբերության արձակուրդի, պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելու, մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցներից մեկի) կողմից զբաղեցնելը համայնքային ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության, սույն օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում այդ պաշտոնն զբաղեցվում է պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությամբ՝ տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող համայնքային ծառայողի կողմից մինչև վեց ամիս ժամկետով, բացառությամբ հղիության, ծննդաբերության եւ երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդի, պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելու,

ինչպես նաև վեց ամիսը գերազանցող ժամկետով սույն օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված գործուղման դեպքերի:

Փոխարինող համայնքային ծառայողի կողմից զբաղեցնելու ժամկետի ավարտից հետո կամ փոխարինողի բացակայության կամ սույն հոդվածի 1-ին մասի առաջին պարբերությունով նախատեսված մյուս դեպքերում ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցվում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հաշվի առնելով սույն օրենքի 11-րդ, 12-րդ հոդվածների, 24-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ մեկ այլ անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելով:

Չի թույլատրվում սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված այլ անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքել, եթե համայնքային ծառայության ժամանակավոր թափուր տվյալ պաշտոնն առաջացել է նրա՝ այդ պաշտոնից սույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի "բ", "գ", "ե", "թ", "ժ" եւ "ժթ" կետերով նախատեսված հիմքերից որեւէ մեկով ազատվելու հետեւանքով:

2. Սույն հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունում նշված անձանց հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(18-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

ԳԼՈՒԽ 4

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄԸ, ՎԵՐԱՊԱՏՐԱՄՏՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎԸ

ՀՈԴՎԱԾ 19. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄԸ

1. Համայնքային ծառայողի հերթական ատեստավորումն անցկացվում է երեք տարին մեկ:

2. Համայնքային ծառայողի արտահերթ ատեստավորումն անցկացվում է հերթական ատեստավորումից առնվազն մեկ տարի հետո:

3. Համայնքային ծառայողի արտահերթ ատեստավորումն անցկացվում նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի պատճառաբանված որոշման հիման վրա:

4. Ատեստավորումն անցկացվում է համայնքային ծառայողի անմիջական մասնակցությամբ:

5. Ատեստավորման ենթակա չեն՝

ա) տվյալ պաշտոնը մեկ տարուց պակաս ժամկետով զբաղեցնող համայնքային ծառայողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել:

բ) պարտադիր զինվորական ծառայությունից վերադարձած համայնքային ծառայողները վերադառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել:

գ) հղի եւ մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող, վերապատրաստում անցնող, համայնքային ծառայողները, եթե նրանք այդպիսի ցանկություն չեն հայտնել:

Հղիության եւ երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող համայնքային ծառայողները ենթակա են ատեստավորման արձակուրդից վերադառնալուց հետո ոչ շուտ, քան մեկ տարի հետո, եթե վերջիններս ցանկություն չեն հայտնել ավելի վաղ ատեստավորվելու համար:

Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող, ինչպես նաեւ ժամանակավոր անաշխատունակ համայնքային ծառայողները ենթակա են ատեստավորման աշխատանքի ներկայանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

6. Ատեստավորման ենթակա համայնքային ծառայողները ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ, տեղեկացվում են ատեստավորման մասին:

7. Ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ անմիջական ղեկավարը ներկայացնում է համայնքային ծառայողի ծառայողական բնութագիրը:

Ծառայողական բնութագիրը պետք է պարունակի համայնքային ծառայողի մասին տվյալներ եւ նրա՝ գործնական, մարդկային հատկանիշների ու ծառայողական գործունեության արդյունքների հիմնավորված գնահատականը: Այդ գնահատականը պետք է հիմնվի նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակաշրջանում համայնքային ծառայողի կատարած աշխատանքների մասին կիսամյակը մեկ անմիջական ղեկավարին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ վերջինիս եզրակացությունների վրա:

Եթե ատեստավորումների միջեւ ընկած ժամանակաշրջանում համայնքային ծառայողի անմիջական ղեկավարն ազատվել է պաշտոնից ատեստավորումից հետո զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու հիմքով (քաղաքական եւ հայեցողական պաշտոններ զբաղեցնող ղեկավարների դեպքում՝ հեռացման կամ պաշտոնանկության հիմքով), ապա նրա տված եզրակացություններն իրավաբանական ուժ չունեն: Եթե նման ղեկավարի տված եզրակացություններն ընդգրկում են ատեստավորումների միջեւ ընկած

ժամանակաշրջանի երկու երրորդից ավելին, ապա համայնքային ծառայողի վերաբերյալ ծառայողական բնութագիր չի ներկայացվում:

Համայնքային ծառայողն ատեստավորում անցկացնելու օրվանից առնվազն մեկ շաբաթ առաջ պետք է ծանոթանա իր ծառայողական բնութագրին:

8. Ատեստավորումն անցկացվում է հետևյալ եղանակներով.

ա) փաստաթղթային.

բ) թեստավորման եւ հարցազրույցի:

9. Համայնքային այն ծառայողները, ովքեր ունեն զբաղեցրած պաշտոնի ենթախմբի համար սույն օրենքով նախատեսված առավելագույն դասային աստիճան, ենթակա են փաստաթղթային ատեստավորման:

Փաստաթղթային ատեստավորումն անցկացվում է ծառայողական բնութագրի հիման վրա՝ հարցազրույցի միջոցով:

Փաստաթղթային ատեստավորումից հետո ատեստավորման հանձնաժողովն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

ա) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.

բ) ենթակա է ատեստավորման թեստավորման եւ հարցազրույցի միջոցով:

10. Թեստավորման եւ հարցազրույցի միջոցով ատեստավորման ենթակա են համայնքային այն ծառայողները՝

ա) ովքեր փաստաթղթային ատեստավորման ենթակա չեն.

բ) որոնց վերաբերյալ ատեստավորման հանձնաժողովն ընդունել է սույն հոդվածի 9-րդ մասի 3-րդ պարբերության "բ" կետում նշված որոշումը:

Թեստավորումը կարող է անցկացվել համակարգչի միջոցով կամ գրավոր:

Թեստերը կազմում, հարցազրույցն անցկացնում եւ արդյունքները գնահատում է ատեստավորման հանձնաժողովը՝ սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կարգով:

11. Սույն հոդվածով սահմանված կարգով ծառայողական բնութագիր

չներկայացնելը չի կարող բացասաբար ազդել համայնքային ծառայողի ատեստավորման արդյունքների վրա:

12. Ատեստավորման հանձնաժողովը թեստավորման եւ հարցազրույցի

արդյունքներով ընդունում է հետևյալ որոշումներից մեկը. (19-րդ հոդվածի 12 մաս ա ենթ. ուժը կորցրել է 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

բ) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.

(19-րդ հոդվածի 12 մաս գ ենթ. ուժը կորցրել է 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

դ) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:

Ատեստավորման հանձնաժողովի որոշումները, իսկ ատեստավորման արդյունքների բողոքարկման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի որոշումները պարտադիր են համայնքային ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի համար:

13. Համայնքային ծառայողն իրավունք ունի ծանոթանալու ատեստավորման արդյունքներին եւ բողոքարկելու դրանք՝ սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կարգով:

14. Ատեստավորման արդյունքները սույն օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ եւ 10.1-րդ մասերով սահմանված կարգով եռօրյա ժամկետում ներկայացվում են ատեստավորված համայնքային ծառայողին պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին, որը համայնքային ծառայողի զբաղեցրած պաշտոնում չհամապատասխանելու արդյունքի դեպքում ոչ ուշ, քան աշխատանքային երեք օրվա

ընթացքում ընդունում է որոշում՝ նրան զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին:

15. (15-րդ հոդվածի 15 մասն ուժը կորցրել է 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

16. Սույն օրենքի հիման վրա համայնքային ծառայողի ատեստավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

(19-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

ՀՈՂՎԱԾ 20. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1. Յուրաքանչյուր համայնքային ծառայող առնվազն երեք տարին մեկ ենթակա է պարտադիր վերապատրաստման:

Վերապատրաստումն անցկացվում է նաև համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով համայնքային ծառայողի իրավունքների ու պարտականությունների, մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման կոնկրետ պահանջների կատարելագործման կամ այդ պահանջների փոփոխության դեպքում՝ համայնքային ծառայողի կամ համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ:

2. Համայնքային ծառայողների վերապատրաստումն անցկացնում են մրցութային կարգով ընտրված կազմակերպությունները: Համայնքների ղեկավարներից ստացված հայտերի հիման վրա մրցույթն անցկացնում է միջհամայնքային միավորումը, իսկ այն համայնքներում, որոնք ընդգրկված չեն միջհամայնքային միավորումներում՝ համապատասխան մարզպետարանը:

Համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագրերը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

3. Մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների

կատարելագործման նպատակով համայնքային ծառայողի գործուղումն օրենքով սահմանված կարգով իրականացվում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի թույլտվությամբ, իսկ մեկ տարուց ավելի ժամկետով գործուղման դեպքում՝ համայնքի ղեկավարի թույլտվությամբ: Նշված դեպքերում պահպանվում են համայնքային ծառայողի պաշտոնը եւ համայնքային ծառայության ստաժը, իսկ նրա վարձատրությունը կարող է պահպանվել համայնքի ղեկավարի հայեցողությամբ:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված մրցույթի անցկացման կարգը, ինչպես նաև համայնքային ծառայողների վերապատրաստման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

(20-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

ՀՈՂՎԱԾ 21. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՂԵՐՎԻ ՌԵՁԵՐՎԸ

1. Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցվում են սույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի "գ", "է" եւ "ժը" կետերով նախատեսված հիմքերով համայնքային ծառայության պաշտոնից ազատված անձինք:

Համայնքային ծառայության ռեզերվում գրանցվում են նաև՝

ա) համայնքի ղեկավարի կամ համայնքի ղեկավարի տեղակալի, խորհրդականի, մամուլի քարտուղարի, օգնականի, ռեֆերենտի պաշտոններ զբաղեցրած անձինք՝ պաշտոնավարման ավարտից հետո:

բ) համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացված մրցույթում օրենքով սահմանված կարգով հաղթող ճանաչված, սակայն պաշտոնի չնշանակված անձինք:

2. Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը մեկ տարի է, բայց ոչ ավելի, քան կադրերի ռեզերվում գրանցված անձի 65 տարին լրանալը:

3. Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցելու եւ կադրերի ռեզերվից հանելու կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

(21-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

ԻՐՏԵԿ - շարունակությունը հաջորդ մասում

010.0043.150105

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
(2-րդ մաս)

ԳԼՈՒԽ 5

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

ՀՈԴՎԱԾ 22. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքային ծառայողի հիմնական իրավունքներն են՝

- ա) ծանոթանալ համայնքային ծառայության պաշտոնի անձնագրով սահմանված իր պաշտոնական իրավունքներին եւ պարտականություններին.
 - բ) ծանոթանալ իր անձնական գործի բոլոր նյութերին, իր գործունեության գնահատականներին ու այլ փաստաթղթերի եւ ներկայացնել բացատրություններ.
 - գ) ծառայողական պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ տեղեկություններ եւ նյութեր.
 - դ) իր լիազորությունների շրջանակներում ընդունել որոշումներ.
 - ե) պահանջել անցկացնել ծառայողական քննություն.
 - զ) ունենալ անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմաններ.
 - է) սոցիալական պաշտպանությունը եւ ապահովությունը.
 - ը) իրավական պաշտպանությունը, ներառյալ՝ քաղաքական հետապնդումներից.
 - թ) օրենքով սահմանված կարգով բարձրացնել համայնքային ծառայության դասային աստիճանը.
 - ժ) վերապատրաստվել համայնքային բյուջեների միջոցների, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին.
 - ժա) բողոքարկել մրցույթի եւ ատեստավորման արդյունքները, ընդ որում՝ դատական կարգով.
 - ժբ) մասնակցել համայնքային ծառայության կազմակերպման ու կատարելագործման հարցերի քննարկմանը եւ ներկայացնել առաջարկություններ:
- Համայնքային ծառայողն ունի նաեւ սույն օրենքով եւ իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

ՀՈԴՎԱԾ 23. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքային ծառայողի հիմնական պարտականություններն են՝

- ա) կատարել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների եւ իրավական այլ ակտերի պահանջները.
- բ) մասնագիտական եւ ծառայողական պարտականությունների կատարման համար ապահովել անհրաժեշտ այլ գիտելիքներ.
- գ) ճշգրիտ ու ժամանակին կատարել իրեն վերապահված պարտականությունները եւ ներկայացնել հաշվետվություններ.

դ) կատարել վերադաս մարմինների եւ պաշտոնատար անձանց՝ օրենքով սահմանված կարգով տված հանձնարարականները եւ ընդունած որոշումները .

ե) պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները .

զ) օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում քննության առնել եւ ընթացք տալ առաջարկություններին, դիմումներին եւ բողոքներին .

է) պահպանել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո .

ը) պահպանել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի սահմանած համայնքային ծառայողի էթիկայի կանոնները .

թ) օրենքով սահմանված կարգով ներկայացնել գույքի եւ եկամուտների հայտարարագիր:

Համայնքային ծառայողն ունի նաեւ սույն օրենքով եւ իրավական այլ ակտերով սահմանված այլ պարտականություններ:

(23-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

ՀՈԴՎԱԾ 24. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՆԿԱՏԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ԾԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Համայնքային ծառայողն իրավունք չունի՝

ա) կատարելու վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական եւ ստեղծագործական աշխատանքից .

բ) լինելու երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը գտնվում է ծառայության մեջ, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն, կամ անմիջականորեն վերահսկում է ինքը .

գ) խախտելու համայնքային ծառայողների քաղաքական գաղափարային սկզբունքը, իր ծառայողական դիրքն օգտագործելու կուսակցությունների, հասարակական, ներառյալ՝ կրոնական միավորումների շահերի համար, նրանց հանդեպ վերաբերմունք քարոզելու, ինչպես նաեւ իր ծառայողական պարտականությունները կատարելիս իրականացնելու քաղաքական կամ կրոնական այլ գործունեություն .

դ) հոնորար ստանալու ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար .

ե) ոչ ծառայողական նպատակներով օգտագործելու նյութատեխնիկական, ֆինանսական եւ տեղեկատվական միջոցները, պետական կամ համայնքային այլ գույքը եւ ծառայողական տեղեկատվությունը .

զ) ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անձանցից ստանալու նվերներ, գումարներ կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի .

է) որպես տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչ՝ գույքային գործարքներ կնքելու սույն հոդվածի 3-րդ մասում նշված անձանց հետ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

2. Համայնքային ծառայության պաշտոնում նշանակվելուց կամ առեւտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում 10 եւ ավելի տոկոս բաժնեմաս ձեռք բերելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, համայնքային ծառայողը օրենքով սահմանված կարգով պարտավոր է դա հանձնել հավատարմագրային կառավարման:

Համայնքային ծառայողն իրավունք ունի հավատարմագրային կառավարման հանձնված գույքից ստանալու եկամուտ:

3. Համայնքային ծառայողին արգելվում է համատեղ աշխատել մերձավոր

ազգակցությամբ կամ խնամիրությանբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր) հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ:

(24-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

ՀՈՂՎԱԾ 25. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Համայնքային ծառայողին չեն կարող տրվել բանավոր կամ գրավոր այնպիսի հանձնարարականներ, որոնք`

ա) հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը եւ օրենքներին.

բ) դուրս են հանձնարարականներ տվողի եւ կատարողի լիազորությունների շրջանակներից:

2. Սույն հոդվածի 1-ին մասի խախտմամբ հանձնարարականներ տալու դեպքերում համայնքային ծառայողը պարտավոր է ստացած հանձնարարականի օրինականության վերաբերյալ իր կասկածների մասին անհապաղ գրավոր զեկուցել հանձնարարականը տվողին եւ նրա վերադասին կամ նրանց փոխարինող անձանց:

Հանձնարարական տվողը եւ (կամ) նրա վերադասը, նրա բացակայության դեպքում նրան փոխարինող անձը գրավոր հաստատում են տրված հանձնարարականը, ապա համայնքային ծառայողը պարտավոր է դա կատարել, բացառությամբ այն դեպքերի, երբ հանձնարարականի կատարումը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված քրեական կամ վարչական պատասխանատվության, եւ այդ մասին գրավոր տեղեկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին: Համայնքային ծառայողի կողմից այդ հանձնարարականի կատարման համար պատասխանատվությունը կրում է հանձնարարականը գրավոր հաստատողը:

(25-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

ՀՈՂՎԱԾ 26. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

1. Համայնքային ծառայողի համար երաշխավորվում են`

ա) ծառայողական պարտականությունների կատարման համար անվտանգ եւ անհրաժեշտաշխատանքային պայմաններ.

բ) վարձատրություն, իր զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճանի համար հավելավճար եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ վճարներ.

գ) ամենամյա վճարովի արձակուրդ.

դ) վերապատրաստում` պահպանելով պաշտոնը եւ աշխատավարձը.

ե) օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով պարտադիր պետական սոցիալական ապահովագրություն.

զ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում եւ կարգով համայնքային ծառայողի դիմումի հիման վրա ծառայողական

պարտականությունների կատարման հետ կապված նրա եւ նրա ընտանիքի անդամների անվտանգության պաշտպանության ապահովում բռնությունից, ահաբեկումից եւ այլ ոտնձգություններից.

է) ծառայողական գործուղումների հետ կապված տրանսպորտային, բնակարանային եւ այլ ծախսերի` Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցում:

2. Համայնքային ծառայողին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում եւ կարգով հատկացվում է տրանսպորտային միջոց կամ տրանսպորտային ծախսերի փոխհատուցում:

ՀՈՂՎԱԾ 27. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Համապատասխան համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների միեւնույն խմբի եւ ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողները, առանց խտրականության, ունեն հավասար պաշտոնային դրույքաչափի իրավունք:

2. Համայնքային ծառայողի վարձատրության չափը եւ դրա փոփոխությունները համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին:

Յուրաքանչյուր համայնքային ծառայողի աշխատավարձը չի կարող գերազանցել տվյալ համայնքի ղեկավարի աշխատավարձի 80 տոկոսը:

(27-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

ՀՈՒՎԱԾ 28. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքային ծառայողի սոցիալական ապահովությունը իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՈՒՎԱԾ 29. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ (ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ) ԺԱՄԱՆԱԿ

1. Համայնքի ղեկավարի աշխատակազմի վերակազմակերպումը, անվանափոխությունը եւ կառուցվածքային փոփոխությունը, ինչպես նաեւ աշխատակազմի կառուցվածքային կամ առանձնացված ստորաբաժանումների անվանափոխությունը համայնքային ծառայողին պաշտոնից ազատելու հիմք չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ տեղի է ունենում հաստիքների կրճատում:

Համայնքային ծառայության պաշտոնների միեւնույն խմբի միեւնույն ենթախմբի մեկից ավելի պաշտոններ ունեցող համայնքի ղեկավարի աշխատակազմի կամ դրա կառուցվածքային (առանձնացված) ստորաբաժանման նշված հաստիքներից մեկի կամ մի քանիսի կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը տրվում է համապատասխանաբար աշխատակազմի կամ դրա կառուցվածքային (առանձնացված) ստորաբաժանման համայնքային ծառայության պաշտոնների համապատասխան խմբի ենթախմբի պաշտոն զբաղեցնող հղի կամ մինչեւ երեք տարեկան երեխա խնամող կամ պարտադիր զինվորական ծառայության գորակոչված համայնքային ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության դեպքում՝ այն

համայնքային ծառայողին, որն ունի համայնքային ծառայության ավելի բարձր դասային աստիճան, իսկ այս պայմանի հավասարության դեպքում՝ որն ունի համայնքային ծառայության առավել երկար ստաժ:

2. Համայնքի ղեկավարի աշխատակազմի վերակազմակերպման կամ կառուցվածքային փոփոխության հետեւանքով համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում առաջացած նոր պաշտոններն անվանացանկում փոփոխություններ կատարելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությամբ կարող են համալրվել կառուցվածքային փոփոխություններ կրած

համապատասխան աշխատակազմի կամ կառուցվածքային (առանձնացված) ստորաբաժանման, սույն օրենքի 10-րդ հոդվածի պահանջները բավարարող եւ այդ մասին գրավոր համաձայնություն տված, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող այն անձանց (այդ թվում՝ վերակազմակերպման կամ կառուցվածքային փոփոխության կապակցությամբ հաստիքների կրճատման հետեւանքով զբաղեցրած պաշտոններից ազատված անձանց) միջոցով, ովքեր համարվում են համայնքային ծառայության միեւնույն խմբի պաշտոն զբաղեցնող կամ առնվազն ունեն տվյալ թափուր պաշտոնի համար նախատեսված

համայնքային ծառայության դասային աստիճան կամ զբաղեցնելու են առավելագույնը համայնքային ծառայության իրենց զբաղեցրած խմբին հաջորդող բարձր խմբի 3-րդ ենթախմբի պաշտոն:

Սույն մասում նշված ժամկետի ավարտից հետո թափուր մնացած պաշտոններն զբաղեցվում են մրցույթով:

(29-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

ՀՈՒՎԱԾ 30. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾԸ

1. Համայնքային ծառայողի ծառայողական գործունեության ընթացքն արտացոլվում է նրա անձնական գործում, որը վարում է համապատասխան համայնքի ղեկավարի աշխատակազմը:

1.1. Համայնքային ծառայողների մասին տեղեկություններն ընդգրկվում են համայնքային ծառայողների գրանցամատյանում, որը վարում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

2. Համայնքային ծառայողների անձնական գործերի եւ գրանցամատյանի վարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

(30-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

ԳԼՈՒԽ 6

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՄՈՒՄԸ, ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԻ ԵՆԹԱՐԿԵԼԸ ԵՎ ՊԱՇՏՈՆՈՑ ԱԶԱՏԵԼԸ

ՀՈՒՎԱԾ 31. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԽՐԱԽՈՒՄՈՒՄԸ

1. Երկարամյա ծառայության, ինչպես նաեւ ծառայողական պարտականությունները եւ գերազանց կատարելու համար համայնքային ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետեւյալ տեսակները.

ա) շնորհակալության հայտարարում.

բ) միանվագ դրամական պարգևատրում.

գ) հուշանվերով պարգևատրում.

դ) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում.

ե) (31-րդ հոդ 1-ին մ է ենթ. ուժը կորցրել է 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

զ) կարգապահական տույժի հանում:

Համայնքային ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել նաեւ օրենքով սահմանված խրախուսման այլ տեսակներ:

2. Համայնքային ծառայողի նկատմամբ սույն հոդվածի 1-ին մասի "ա", "բ", "գ", "դ" եւ "զ" կետերով նախատեսված խրախուսանքները կիրառում է պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

(31-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

ՀՈՒՎԱԾ 32. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաեւ պաշտոնեական լիազորությունները վերազանցելու, աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու դեպքերում օրենքով սահմանված կարգով համայնքային ծառայողի նկատմամբ կիրառվում են կարգապահական հետեւյալ տույժերը.

ա) նախազգուշացում.

բ) նկատողություն.

գ) խիստ նկատողություն.

գ.1) համայնքային ծառայության առավելագույն դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով.

դ) զբաղեցրած պաշտոնից ազատում:

2. Մինչև կարգապահական տույժ նշանակելը խախտում թույլ տված համայնքային ծառայողից պահանջվում է բացատրություն:

Կարգապահական տույժը նշանակվում է կարգապահական խախտումը հայտնաբերելու օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում, չհաշված ծառայողի հիվանդությունը կամ արձակուրդում գտնվելու ժամանակը:

Կարգապահական տույժ չի կարող նշանակվել, եթե կարգապահական խախտում կատարելու օրվանից անցել է վեց ամսից ավելի ժամանակ:

Կարգապահական տույժ նշանակելու մասին համայնքային ծառայողին հաղորդվում է ոչ ուշ, քան կարգապահական տույժ նշանակելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:

Եթե համայնքային ծառայողը իր նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա նրա նկատմամբ կիրառված կարգապահական տույժը համարվում է հանված:

Կարգապահական տույժը կարող է հանվել մինչև մեկ տարին լրանալը՝ սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի "գ" կետով նախատեսված խրախուսանքի տեսակի կիրառման միջոցով, եթե համայնքային ծառայողը թույլ չի տվել կարգապահական նոր խախտում եւ իրեն դրսևորել է որպես բարեխիղճ ծառայող:

3. Սույն հոդվածի 1-ին մասի "ա", "բ", "գ" եւ "դ" կետերով նախատեսված կարգապահական տույժերը համայնքային ծառայողի նկատմամբ կիրառում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, իսկ "գ.1" կետով նախատեսված կարգապահական տույժը՝ համապատասխան առավելագույն դասային աստիճան շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով եւ դեպքերում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգապահական տույժերը կիրառվում են ծառայողական քննություն անցկացնելուց հետո: Ծառայողական քննություն անցկացնելու ընթացքում համայնքային ծառայողի ծառայողական պարտականությունների կատարումը մինչև մեկ ամիս ժամկետով կարող է կասեցվել համայնքային ծառայողի վարձատրության պահպանմամբ:

5. Ծառայողական քննության արդյունքում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ընդունած որոշումներն ունեն պարտադիր բնույթ:

(32-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

ՀՈՂՎԱԾ 33. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶՍԵՆՈՒ ՀԻՄՔԵՐԸ

1. Համայնքային ծառայողին պաշտոնից ազատելու հիմքերն են՝

ա) անձնական դիմումը.

բ) օրենքով սահմանված կարգով իր գույքի եւ եկամուտների հայտարարագիրը չներկայացնելը.

գ) սույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի "բ" եւ "գ" կետերով նախատեսված կարգապահական տույժերից որեւէ մեկի կիրառումից հետո՝ մեկ տարվա ընթացքում, նոր կարգապահական խախտում թույլ տալը.

դ) (33-րդ հոդ 1-ին մ դ ենթ. ուժը կորցրել է 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

ե) սույն օրենքով նախատեսված ատեստավորման արդյունքները.

զ) հաստիքների կրճատումը.

է) ժամանակավոր անաշխատունակության հետեւանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան վեց ամիս աշխատանքի չներկայանալը՝ չհաշված հղիության եւ ծննդաբերության արձակուրդը.

ը) իր գրավոր համաձայնությամբ այլ պաշտոնում ընտրվելը կամ նշանակվելը կամ համայնքային ծառայողի պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի անցնելը.

թ) համայնքային ծառայության պաշտոնում նշանակելու՝ սույն օրենքով սահմանված կարգի խախտումը.

ժ) սույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները չպահպանելը.

ժա) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելը կամ փախստականի կարգավիճակ կորցնելը՝ առանց Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման.

ժբ) օրինական ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը.

ժգ) համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու՝ սույն օրենքով սահմանված առավելագույն տարիքի լրանալը.

ժդ) սույն օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելը.

ժե) դատական կարգով անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող ճանաչվելը.

ժզ) դատական կարգով համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկվելը.

ժէ) սույն օրենքի 12-րդ հոդվածի "գ" կետով նախատեսված հիվանդություններից որեւէ մեկով հիվանդանալը.

ժը) համապատասխան մարմնի լուծարումը.

ժթ) սույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի "դ" կետով նախատեսված կարգապահական տույժ կիրառելը:

2. Համայնքային ծառայողի պարտականությունները համարվում են դադարած նրա մահվան դեպքում:

3. Համայնքային ծառայողը պաշտոնից ազատման ենթակա չէ սույն հոդվածի 1-ին մասի "ա" կետի հիմքով, եթե առկա է սույն հոդվածի 1-ին մասի "բ-ժթ" կետերով նախատեսված պաշտոնից ազատման հիմքերից որեւէ մեկը:

4. Սույն հոդվածի 1-ին մասի "ա" կետի հիմքով համայնքային ծառայողը ազատվում է զբաղեցրած պաշտոնից անձնական դիմում ներկայացնելուց հետո՝ աշխատանքային երեք օրվա ընթացքում, եթե այդ դիմումում այլ ժամկետ նախատեսված չէ:

(33-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

ՀՈՂՎԱԾ 34. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՏԱՐԻՔԸ

1. Համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը 65 տարին է:

2. Համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալու դեպքում համայնքի ղեկավարի որոշմամբ ծառայողը կարող է մինչեւ մեկ տարի ժամկետով շարունակել զբաղեցնել իր պաշտոնը:

ՀՈՂՎԱԾ 35. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ

ՈՐՈՇՈՒՄԸ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԲՈՂՈՔԱՐԿԵԼԸ

1. Համայնքային ծառայողն իր նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու, ներառյալ՝ համայնքային ծառայության պաշտոնից ազատելու որոշումը կարող է բողոքարկել դատական կարգով:

2. Համայնքային ծառայության պաշտոնից ազատելու որոշումն անվավեր

ճանաչվելու դեպքում ծառայողը վերականգնվում է իր պաշտոնում դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, եւ հարկադիր պարապորդի դիմաց ստանում է հատուցում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եւ չափով:

ԳԼՈՒԽ 6.1.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ
(6.1-րդ գլուխը լրաց. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

ՀՈԴՎԱԾ 35.1. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

1. Համայնքային ծառայության ղեկավարման եւ կազմակերպման մարմիններն են՝
ա) Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը.

բ) համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը:

ՀՈԴՎԱԾ 35.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը՝

ա) սույն օրենքի հիման վրա մշակում եւ իրականացնում է համայնքային ծառայության միասնական պետական քաղաքականությունը.

բ) իրականացնում է համայնքների ղեկավարների աշխատակազմերի կադրային գործի վարման մեթոդական ղեկավարումը եւ վերահսկումը.

գ) համայնքային ծառայության մասին օրենսդրության պահանջներին հակասող ակտերն անվավեր ճանաչելու համար դիմում է դատարան.

դ) համայնքային ծառայության մասին օրենսդրության պահանջներին հակասող գործողությունը եւ (կամ) անգործությունը բողոքարկում է դատարան.

ե) առաջարկություններ է ներկայացնում համայնքների ղեկավարների աշխատակազմերի վերականգնման, կառուցվածքային փոփոխության (անվանափոխության) եւ լուծարման ժամանակ համայնքային ծառայության հետ կապված հարցերի վերաբերյալ.

զ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քննում է համայնքային ծառայության վերաբերյալ առաջարկությունները, դիմումներն ու բողոքները.

է) սահմանված կարգով եւ դեպքերում վարում է ծառայողական քննություն.

ը) վարում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվը.

թ) համայնքների ղեկավարներից եւ այլ մարմիններից ստանում է համայնքային ծառայության հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն եւ նյութեր.

ժ) ընդունում է սույն օրենքով նախատեսված, ինչպես նաեւ սույն օրենքի կատարումն ապահովող նորմատիվ իրավական ակտեր.

ժա) իրականացնում է սույն օրենքով, այլ օրենքներով, դրանցից բխող իրավական ակտերով եւ իր կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման

մարմնի կողմից սույն հոդվածի 1-ին մասի "բ", "ե" եւ "զ" կետերով նախատեսված լիազորությունները կարող են փոխանցվել համապատասխան տարածքային կառավարման մարմնին:

ՀՈՂՎԱԾ 35.3. Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը

1. Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը համայնքային ծառայող է:
2. Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը համայնքային ծառայության կազմակերպման եւ ղեկավարման մասով ղեկավարվում է համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ:
3. Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի լիազորությունները սահմանվում են սույն օրենքով, "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով, համապատասխան համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությամբ եւ այլ իրավական ակտերով:

ԳԼՈՒԽ 7

ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԽԱԽՏԵԼՈՒ ԴԵՊՔԵՐՈՒՄ

ՀՈՂՎԱԾ 36. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԽԱԽՏԵԼՈՒ ԴԵՊՔԵՐՈՒՄ

1. Համայնքային ծառայության մասին օրենսդրության կիրառման հետ կապված վեճերը լուծվում են համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև դատական կարգով:
2. Համայնքային ծառայության մասին օրենսդրությունը խախտող անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 8

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈՂՎԱԾ 37. ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող երեսուներորդ օրվանից:

ՀՈՂՎԱԾ 38. ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻՑ ԲԽՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԸՆԴՈՒՆԵԼԸ

Սույն օրենքից բխող իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

ՀՈՂՎԱԾ 39. ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ՝ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Սույն օրենքի պահանջների համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների ստանձնած պարտավորությունների հետ կապված ծախսերի ֆինանսավորումը իրականացվում է համայնքների բյուջեների հաշվին, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այդ ծախսերի ֆինանսավորման համար այլ աղբյուրներ սահմանված չեն, ընդ որում՝ սույն օրենքի կիրարկման հետ կապված՝ "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 71-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթները չեն գործում:

ՀՈՂՎԱԾ 40. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ ՀԱՄՏԱՏԵԼԸ

Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը սահմանված կարգով ենթակա է հաստատման սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ ութերորդ ամսվա 1-ից:

**ՀՈՂՎԱԾ 41. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ
ՀԱՄՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՄՏԱՏԵԼԸ**

Համայնքների ղեկավարների աշխատակազմերի հաստիքացուցակը եւ ծառայության պաշտոնների անձնագրերը համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի հաստատումից հետո՝ չորսամսյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են հաստատման (փոփոխման):

(41-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

**ՀՈՂՎԱԾ 42. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ
ՀԱՄՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ՀԱՄՏԱՏՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒՄ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ**

Համայնքների ղեկավարների աշխատակազմերի՝ սույն օրենքի 41-րդ հոդվածով նախատեսված հաստիքացուցակի հաստատումից (փոփոխումից) հետո՝ երկամսյա ժամկետում, համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոններում կարող են նշանակվել միայն այդ մարմինների անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագրերով աշխատողները:

Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոններում՝ նշանակման հետ միաժամանակ, աշխատողների հետ կնքված անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագրերը համարվում են լուծված:

Համայնքային ծառայողների հետ աշխատանքային հարաբերությունների ծագման հիմքը սույն օրենքով սահմանված կարգով համայնքային ծառայողին համապատասխան պաշտոնում նշանակելու մասին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի ընդունած իրավական ակտն է:

(42-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

**ՀՈՂՎԱԾ 43. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ ՀԱՄԱՐԵԼԸ**

1. Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոններ զբաղեցնող աշխատողները համարվում են համայնքային ծառայողներ՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ տասնմեկերորդ ամսվա 1-ից:

2. Համայնքների ղեկավարների աշխատակազմերի աշխատողները սույն հոդվածով սահմանված կարգով համայնքային ծառայողներ են համարվում՝ հաշվի առնելով սույն օրենքի 10-12-րդ հոդվածների, 24-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 34-րդ հոդվածի պահանջները:

3. Սույն հոդվածով սահմանված կարգով համայնքային ծառայող համարված համայնքների ղեկավարների աշխատակազմերի աշխատողներին ծառայության առաջին համապատասխան դասային աստիճանը շնորհվում է սույն օրենքով նախատեսված առաջին աստեսավորումից հետո:

4. Համայնքների ղեկավարների աշխատակազմերում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ տասնմեկերորդ ամսվա 1-ից հետո, համայնքային ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում այդ պաշտոնն զբաղեցվում է մրցույթով:

(43-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

**ՀՈՂՎԱԾ 44. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐՈՒՄ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ**

Համայնքների ղեկավարների աշխատակազմերում ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոններ զբաղեցնող ժամկետային աշխատանքային պայմանագրերով աշխատողների հետ կնքված պայմանագրերը համարվում են լուծված սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ իններորդ ամսվա 1-ից, եթե այդ պայմանագրերով դրանց լուծման ավելի վաղ ժամկետներ նախատեսված չեն:

(44-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

ՀՈՒՎԱԾ 45. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՄՏՈՒՄԸ

Համայնքային ծառայության գլխավոր եւ առաջատար պաշտոններ զբաղեցնող անձանց առաջին վերապատրաստումն անցկացվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ քսանյոթերորդ ամսվա 1-ից:

Համայնքային ծառայության կրտսեր պաշտոններ զբաղեցնող անձանց առաջին վերապատրաստումն անցկացվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեսունիններորդ ամսվա 1-ից:

Համայնքային ծառայողների առաջին վերապատրաստման անցկացումն ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմինը՝ մշակված ծրագրերին համապատասխան:

(45-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

ՀՈՒՎԱԾ 46. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԱՏԵՄՏԱՎՈՐՈՒՄԸ

Վերապատրաստում անցած համայնքային ծառայության գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձանց առաջին ատեստավորումն անցկացվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ տասնյոթերորդ ամսվա 1-ից:

Վերապատրաստում անցած համայնքային ծառայության առաջատար պաշտոններ զբաղեցնող անձանց առաջին ատեստավորումն անցկացվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ քսանիններորդ ամսվա 1-ից:

Վերապատրաստում անցած համայնքային ծառայության կրտսեր պաշտոններ զբաղեցնող անձանց առաջին ատեստավորումն անցկացվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ քառասունմեկերորդ ամսվա 1-ից:

Սույն օրենքի 44-րդ հոդվածով սահմանված կարգով համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վրա չի տարածվում սույն օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասի "ա" կետի պահանջը:

(46-րդ հոդվածը փոփ. 30.09.08 ՀՕ-172-Ն օրենք)

ՀՈՒՎԱԾ 47. ՆԱԽԿԻՆՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԸ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼԸ

Սույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի "գ" կետի հիմքով համայնքային ծառայողին պաշտոնից ազատելիս հաշվի են առնվում մինչ այդ նրա նկատմամբ կիրառված կարգապահական տույժերը:

15 հունվարի 2005 թվականի
ՀՕ-43- նշան